Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

Երևանի քաղաքապետ
պարոն Տ. Ավինյանին

«17» սեպտեմբերի, 2024թ.
№ 01-09-2024

ԴԻՄՈՒՄ

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպությունն իրազեկում է հոկտեմբերի 1-ին՝ կնասպանության հիշատակի օրվա կապակցությամբ իրականացվող միջոցառման մասին: Հավաքը նախատեսված է իրականացնել Կարապի լճի հարակից տարածքում: Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը ընկած է երեկոյան 18:00-ից մինչև 21:00-ը:

Հավաքը նպատակ ունի հիշատակել կնասպանության զոհերին, բարձրաձայնել ընտանեկան բռնության զոհերի սահմանափակ հասանելիությունը արդարադատությանը: Հավաքին մասնակցողների ակնկալվող առավելագույն թիվը կկազմի 80 մարդ:

Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելու են հետևյալ առարկաները կամ տեխնիկական միջոցները՝

1. Պաստառներ;
2. Ջրի վրա լողացող ջահեր:

Հավաքի կարգադրիչները երեքն են:

Հավաքի ավարտից հետո ջրի վրա լողացող ջահերը հավաքի կազմակերպիչները կհավաքեն, որպեսզի չաղտոտեն շրջակա միջավայրը:

Սույնով խնդրում ենք ի գիտություն ընդունել հավաքի անցկացման իրազեկումը:

Կից՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ պետական գրանցման վկայականի պատճենն ու հավաքի անցկացման վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն

Կանխավ շնորհակալ ենք:

Հարգանքով՝

Նաիրուհի Սաֆարյան _____

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»
հասարակական կազմակերպության նախագահ»

Էլ.փոստ՝ csvwarmenia@gmail.com
Վեբ.կայք՝ www.coalitionagainstviolence.am
Հասցե՝ ՀՀ, Երևան, Հովսեփ Էմին 119/2
Հեռ.՝ +374 41 43 37 43